ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

թիվ ՍՑ-ԱՄ-2018/127

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15370-18 գրությամբ «Աշտարակշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզի Այգավանի համայնքապետարանի 13.08.2018թ. թիվ 287 գրության հիման վրա, 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15370-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Աշտարակշին» ԲԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Աշտարակշին» ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Աշտարակշին» ԲԲԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 29.08.2018թ. գրությամբ հայտնել է, որ «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովին ուղղված նամակում, քանի որ 01.06.2018թ. թիվ 3 որոշմամբ նվազագույն գին առաջարկած մասնակցին առաջարկվել է կնքել պայմանագիր, կանխատեսվում էր, որ հաշվի առնելով անգործության ժամկետը և պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը (40 օր), աշխատանքները պետք է ավարտված լինեին ոչ ուշ քան սույն թվականի օգոստոսի 1-ը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից վարձակալվել էին տեխնիկական միջոցներ, ըստ որի կնքվել էին վարձակալության պայմանագիր մինչև հուլիսի 31-ը:

Քանի որ Ընկերությանը որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին ծանուցվել է 06.08.2018թ., արդեն իսկ տեխնիկական միջոցների վարձակալության ժամկետներն ավարտված են եղել, ինչի մասին Ընկերությունը գրությամբ հայտնել է Պատվիրատուին:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել այն հանգամանքը, որ իրավիճակն առաջացել է Ընկերության կամքից անկախ հանգամանքներից՝ կապված ընթացակարգային ժամկետների լուրջ փոփոխության հետ:

«Աշտարակշին» ԲԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/127 ընթացակարգի շրջանակներում 30.08.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ Արարատի մարզի Այգավանի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Արարատի մարզի Այգավանի համայնքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.08.2018թ. թիվ 287 գրությամբ ներկայացրել է ՀՀ Արարատի մարզի Այգավանի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Աշտարակշին» ԲԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/127 ընթացակարգի շրջանակներում 30.08.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2018/127 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/127 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արարատի մարզի Այգավանի համայնքապետարանի կողմից ՀՀ Արարատի մարզի Այգավանի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Այգավան-Եղեգնավան ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Աշտարակշին» ԲԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.08.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Աշտարակշին» ԲԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. «Աշտարակշին» ԲԲԸ-ն «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 08.08.2018թ. գրությամբ հրաժարվել է Ընթացակարգի հետագա մասնակցությունից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15370-18 գրությունը, ՀՀ Արարատի մարզի Այգավանի համայնքապետարանի 13.08.2018թ. թիվ 287 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 -րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 49-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքվելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովն ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում է սույն կարգի 43-48-րդ կետերով նախատեսված պայմանները:

ՀՀ Արարատի մարզի Այգավանի համայնքապետարանի կողմից ՀՀ Արարատի մարզի Այգավանի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Այգավան-Եղեգնավան ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպվել է «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Աշտարակշին» ԲԲԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին

տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.08.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Աշտարակշին» ԲԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«Աշտարակշին» ԲԲԸ-ն «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 08.08.2018թ. գրությամբ հրաժարվել է Ընթացակարգին հետագա մասնակցությունից: Մասնավորապես Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 01.06.2018թ. թիվ 3 որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկվել է կնքել պայմանագիր և անգործության ժամկետը, ինչպես նաև պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը (40 օր) հաշվի առնելով կանխատեսվել է, որ աշխատանքները պետք է ավարտված լինեն մինչև 01.08.2018թ.: Նշված ժամանակաշրջանի համար Ընկերությունն ուներ համապատասխան ֆինանսական, տեխնիկական միջոցներ և աշխատուժ: Սակայն ներկա պահի դրությամբ Ընկերության կողմից վարձակալած տեխնիկայի վարձակալության պայմանագրերի ժամկետները լրացել են և հաշվի առնելով Ընկերության աշխատանքային ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև հրավերով նախատեսված ժամկետների փոփոխությունների անկանխատեսելիությունը, Ընկերությունը չի կարող շարունակել Ընթացակարգին հետագա մասնակցությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Դրա հետ մեկտեղ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով՝ «Աշտարակշին» ԲԲԸ-ի կողմից «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, փոխարենը Ընկերությունը 08.08.2018թ. գրությամբ հրաժարվել է Ընթացակարգին հետագա մասնակցությունից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Աշտարակշին» ԲԲԸ-ն «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «գ» ենթակետերի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15370-18 գրությամբ «Աշտարակշին» ԲԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 05002465) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Աշտարակշին» ԲԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ